ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2015 թ. հունվարի 14 **N 13 - Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՍԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՒՐԳԵՆ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի փետրվարի 19-ի N 48-Լ հրամանով հաստատված՝ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սուսեր գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ Սուսեր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 507.4 հա արոտավայրերից օգտագործման համար վարձավճարներ չեն գանձվել և այն օգտագործվում է առանց համապատասխան վարձակալության պայմանագրերի կնքման:

Սուսեր համայնքի ղեկավար Գուրգեն Զաքարյանը խախտել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} -րդ և 56^{1}-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Սուսեր համայնքի ղեկավար Գուրգեն Զաքարյանի նկատմամբ նշանակել տուգանք մեկ հարյուր հազար դրամ, որն ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005243119:
2. Սույն որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Սուսեր համայնքի ղեկավար Գուրգեն Զաքարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուսեր համայնքի ղեկավար Գուրգեն Զաքարյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով 10 օրվա ընթացքում:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ